

ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՅԻՐԱԿԱՆ -ԳԻՏԱԿԱՆ -ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹՅԱՅ -ԹՅԱՅ

ՀԱՅՈՐ

29



Ս. ԴԱՅԱՐ

1926

ՑՈՒՆԱՆ

ԹԻՒ 6

ԹԱՇԱԿՈՒՐԱԿԱՆ

ՊԱՏՐԻԱՐքութեան

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏՐԱՊՈԼՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՅ ՄԷՋ

(Ծարումակութիւն, տես Բազմավէպ 1926, էջ 129)

15. Մեր գիմաց կը կանգնի ուրիշ առարկութիւն մ'ալ, նկատելով՝ թէ ինչ-պէս եկեղեցական բարձրագան աթոռները կազմուեցան հոռվէմական տէրութեան սահմանած քաղաքական բաժանմանց հիման վրայ, «Հայոց աշխարհն ալ, -կ'ըսուի սովորական զիւրութեամբ, -որ էր ազատ թագաւորութիւն արտաքոյ կայսերութեան, իւր մայրաքաղաքին մէջ ի Վաղարշապատ ունեցաւ իւր պատրիարքական աթոռը»։ Հոս ալ բացակայ է պատմութիւնը՝ Նախ՝ միւս պատրիարքութիւնը բաղարական ազատութեան յառաջ չեկան. անոնց բոլորն ալ հպատակ էին կայսերութեան. այլ իրենց նահանգաց ընդարձակութեան բնչպէս ըսինք. Յայոց թագաւորութեան բացարձավագատութիւնն ևս անճիշդ է։ Մեծն Հայաստան արդէն 113-117 շրջանին հոռվէմական մարզ գարձած՝ Տրայանոսի ձեռցով՝ կապադովկիոյ կուսակալութեան ներքեւ, յետ ցրիստոնէաւթեան ալ մեծաւ մասամբ կայսերութենէն կախուած մնաց, և անոնց «զատակիրտ մեծ և սիրելի զհայոց աշխարհս անուանէին», կը գրէին Հայք 450ին թէպսս կայսեր։

Առաջին ցրիստոնէայ արքայն Տրդատ՝ արդէն աւետարանի աշակերտելէն յառաջ թէպսս կայսեր։

1. Արքա Հյան. 15-16.

2. Հայու. Darembr.

Provincia. 728. — 3. Երև. 132.

11

| |
|-------------------------------------|
| ՀԱՅԱՍՏԱՆ ՊՐԵՖԵՐԻՆ |
| Ե. Ա. Հ. Յ. Ա. Հ. Յ. Ա. Հ. Յ. |
| Հ. Ա. Հ. Յ. Ա. Հ. Յ. Ա. Հ. Յ. |
| ԴԱՅԵՐ Հ. Ա. Հ. Յ. Ա. Հ. Յ. Ա. Հ. Յ. |

Digitized by

A.R.A.R. @ Անդրանիկ Առաքելյան

իւր հայրենի գահը ժառանգեց Հոռվմայիւ ցուց օգնութեամբ¹, որոց պաշտպանութիւնն ալ ապահովեց «Ազգային կուսանդիւն» էր մէջ անոր ու կոստանդիւնուով մէջ հաստադ տուած կապ մը, բաեւով թէ Ծրդաւ «զար շնչն կոէք ընդ նմա... զի անշուշտ մինչ ի բուն զիաւատարիմ մէրն ի մէջ (երկու) թագաւորութեանցն պահեսցին»². և որ ըստ Փաւստոսի ևս էր նոյնպէս «ուխտ դաշանց կոելոց», որ յետոյ 337ին կայ սեր վրայ պարտց կը տնէր «օգնական է թիկունց լինել աշխարհն Հայոց»³, և որոյ զորութեամբ նաև 450ին Հայք Բիւզանդիոնէն օգնութիւն խնդեցին Պարսից դէմ⁴: Հաւասարից մէջ չէր այդ դաշնըը. այլ զօրաւորի ու տկարի, պաշտպանի ու պաշտոպանեալի, որոյ համեմատութիւնը շատ զգայի է կոստանդիւնուոի 315ին առ Պրոկլիանոս հրովարտակին մէջ ևս, որով կը սահմանէ կայսերական ստացուածոց հասոյթներուն մասնակից ընել Հայոց թագաւորը՝ հաւասար կայսերազուն իշխանաց⁵. այնքան սերտօրէն կապուած է նա հովովմէական գահուն հետ, և ենթարկուած անոր:

Նոյնպէս էին իւր յաջորդներն ալ: Որպին խոսրով թագաւորեց «յօգնականուաթենէ» կոստանդիւն, հարկատու էր կայսեր, և յունական զօրով ընդդիմացաւ Պարսից⁶: Ասոր որդին Տիրանը «թագաւորեցուացնէ» կոստանդու և կը յդէ է Հայս, որ նոյնպէս հարկատու կը մնայ կայսեր⁷: Վերջնոյ թոռնոց Պատ' իւր հօր Արշակայ կողմանէ նախ պատանդ էր Յունաց ցով⁸: Թագաւորեց անոնց ձեռցով, և անպակաս իւր վրայ հսկող ունեցաւ զջերենս՝ իրեն անսակ մը կուսակալ, ինչպէս տեսանց⁹: Ասոր յաջորդը Վարազն, դատ նոյնպէս «թագաւորեցոյց թագաւորն Յունաց»¹⁰. և Մուշեղ ապարապեան ստորով օրով համաձայնութիւն կնքեց կայսեր հետ՝ Հայաստանի մէջ յունական քաղաք մը

հիմնելու, և իւրագանցիւր զաւասի մէջ շնչնելու երկու երկու պարսպաւոր ամրոցներ՝ զարմանածու թանաւոյ և գամենացն ապատան Հայոց կայսերական թօզակօքն զինուորել», որպէս զի երկիրն ապահովէր Պարսից դէմ¹¹: իւր այս հելենական քաղականութիւնն էր՝ որ կասկածիլ ըրաւ զինըը, և իւր կեանըն ու ծրագիրը միանգամայն շնչել տուաւ Բատ Սահառուուոյն ձեռքով¹²: իսկ Պապայ որդին Արշակ կամովին թողուց Այրարատ աշխարհը, որ նշուած էր Պարսից լին ներցե, և յունական կողմն անցաւ՝ «կալ ի նազանութիւն Յունաց թագաւորին»¹³:

Արգ՝ եթէ հայրապետական աթուուր բախտակից լինելու էր միշտ թագաւորականին, ինչպէս իրօք եղեր ալ է սովորաբար, ահա վերջնը ստորակարգեալ էր յունական կայսերութեան. որով հայրապետականն ալ ենթարկուած պիտի լինէր յոյն եկեղեցական բարձրագոյն իշխանութեանց, և նոյն ինքն մերձաւոր կեսարիոյ, որոյ ներցե էր արքէն Փոքր Հայաստանը մինչեւ ցս. Սահակ, և որոյ կոսակալութեան ևս պատկաներ էր երբեմն նաև Մեծը:

16. Եթէ հայ քաղաքական իշխանութիւնը մերթ ջանքեր կ'ընէր անշատուելու Յոյներէն, և հայրապետութիւնն ալ զատելու, ընդ հակառակն հայ եկեղեցին սրտով կապուած էր Գամբաց արքեպիսկոպուին, և յօժարութեամբ կը տանէր անոր գերիշխանութիւնը: Ասոր ապացոյց է, իւր գործնական ընթացքէն զատ՝ զոր Աստանց, այն բարբառն իսկ՝ որով մեր պատմիչները, անդամը ու վարպապետց հայ եկեղեցւոյ, կը խօսին նոյն հովուապիտի մասին: Ղանդիսուի ծանօթ նամակին մէջ, որ աւելի հաւանօրէն խմբազրէն է, կը կոչուի նա շքեղ անուամբս. «արքեպիսկոպու մետրապոլիտ մեզադի (մեծի) կեսարու»¹⁴: «Մեծ արքեպիսկոպոսն կեսարու»՝ կ'անուանէ խորենացին նոյն քա-

1. Աքաթ. 48-49. — 2. Նոյն՝ 653. — 3. Փաւս. 54-55. — 4. Եղեշէ, 133. — 5. Հմա. Գել. Փ. Բ. 150. — 6. Ասորն. Գ. բ. ժ. — 7. Նոյն՝ Գել.

8. Փաւս. 122, 170. — 9. Բագմ. 182. — 10. Փաւս. 234-35. — 11. Նոյն՝ 235-36. — 12. Փարպ. 29. — 13. Աքաթ. 614.

դարին հայրապետը¹, իսկ Փաւստոս կ'ը-
սէ՛ թէ ս. Ներսէս ձեռնազրուելու կը տա-
րուի առ «Կարողիկոսն կարողիկոսաց» Եւ-
սերիոս² այսինքն, ինչպէս առիթը կը
պահանջէ հասկանալ, իրեն գնացող հայ
կարողիկոսին և միւս մետրապոլտաց ալ
կարողիկոսն էր նա: Այս պատճառու անոր
աթոռն ու քաղացն ևս մեծարանօց կը
յիշատակուին միշտ, և պահանջոց իմ՝
մեր հայրապետաց հոն երթալը՝ եպիսկո-
պոսական կարգն ընդունելու. ինչպէս ս.
Յովուկան՝ «յառաքելական ամփոն հայրա-
պետացն»: Փառենին՝ «ի մայրացաղացն
Գամբաց՝ ի կեսարիա»: Շահակին՝ «ի
մեծ քաղացն կեսարիա»: Ներսիսին՝ «յեր-
կիրն Գամբաց և ի մայր քաղացացն նո-
ցա ի կեսարիա»³: Եթոյժ դիտելի է՝ որ
հոն տարրուեր ու կրթուեր էր, իրեւ Հա-
յաստանեայց համար ևս եկեղեցական կե-
ղոսնի մը մէջ, Հայոց առաքեալը ս. Գրի-
գոր. անտի ծագեր էր աւետարանի լոյսը
Մասհաց կատարին վրայ. հոն ծներ ու
զարգացեր էին Լուսաւորչի երկու զաւակ-
ներն ու յաջորդներն ալ⁴. և յատկապէս
հոն տարրուեր էր զամատիարակուելու նաև
մեծն Ներսէս: Վերջապէս հայ սրտին մէջ
ամրապետեր է կեսարիա՝ իւր իրաւական
գերակշիռ դիրքով և տուած կրօնական
ու քաղաքակրթական արգասիօց:

17. Եթէ կայ իրական պատմութիւն
մը, և այդ պատմութիւնը հեղինակութիւն
մ'է՝ ուրիշ ամէն զգացումներէ և հաշիներէ
բարձր, և ամէն ողջամիտ մարդ պար-
տաւոր է յարգել զայն, ուրեմն այդ պատ-
մութիւն ճոխ ու ներդաշնակօրէն զոգոր-
դուած փաստերը հաստատեցին մեզ կեսա-
րիոյ արքեպիսկոպոսին կանոնական իրա-
ւոնքը Հայաստանեայց աթոռին վրայ, որ
ճշգրտէն սահմանելով՝ մետրապոլտութիւն
մ'էր, իշխանութիւն ունենալով հովուելու
իւր վիճակը⁵, բարեկարգական ժողովներ
գումարելու, որոց կեզրոնասեղին էր՝ ա-
ռաջին շրջանին՝ Հայոց մեծագոյն սրբա-

վայրը՝ Աշտիշատի կաթողիկէն⁶, և իւր
եպիսկոպոսները ձեռնազրելու՝ իսկ կե-
սարիոյ իրաւունքն անոր վրայ՝ էր ձեռ-
նազրել Հայոց հայրապետը, կամ հաւա-
նիլ անոր ընտրութեան՝ եթէ արդէն եպիս-
կոպոս էր. զայն մասնակից ունենալ իւր
նահանգային ժողովոց, և ի պահանջնել
հարկին՝ կանոնական խստութեանց իսկ
ենթարկել զայն. միջամտել Հայոց գոր-
ծերուն և օրէնցներ տալ՝ երբ պէտք լինէր,
ու կեսարիոյ ժողովոց կարգադրութիւնըը
պարտադրել անոնց:

Եւ երբ այսցան լուսաւոր, բազմապա-
ցոյց ու կարեւոր պատմական ճշմարտու-
թեան ցոլ՝ ի զարու զրական հրապարակին
վրայ նետուած պատմագրութեան մը մէջ,
որ անշուշտ այլըց և զրչին նախորդ
հրատարակածներէն լաւագոյն ու հմտա-
գոյնը լինելու նպատակով զրուած է, — կը
կարգամ⁷ թէ « Բոլոր պատմութեանց մէջ-
էն անհնար է զործ մը կամ պարագայ
մը ցուցնել, որով կեսարիոյ արքեպիսկո-
պոսներ մեծ կամ բուն Հայաստանի վրայ
իրաւասութիւն կամ հսկողութիւն կատա-
րած ըլլան⁸», կը սախուիմ հարցնել.
Ինչ պէտք կար այդ եկեղեցականին պատ-
մութիւն զրելու, եթէ այդքան անծանօթ
էր իրեն պատմութիւնը կամ ինչո՞ւ զգնաց
զրելու ժ զարուն, որ աւելի պիտի յար-
գէր իւր հմտութիւնը, քան մեր զժուա-
րահամ ու խստապահանջ զարը:

18. Ցարդ ցննեցինց Հայոց աթոռին
իրաւական վիճակը՝ Լուսաւորչէն մինչև
ս. Ներսիսի յաջորդը, Հիմայ կը մնայ
տեսնել անոր զարունակութիւնը, հաստա-
տուելով միշտ ժամանակակից աղրերաց
վրայ: Իրաւազուրկ եղած Յուսկան, որ
նստա շորս տարի, կը յաջորդեցնէ Փաւս-
տոս՝ կարճ կարճ տեսողութեամբ՝ ուրիշ
երեց եպիսկոպոսապետներ. Զաւէն երեց
տարի, Շահակ երկու, և Ասպուրակ հինգ,
որոց իւրաքանչիւրին համար պարզապէս
կ'ըսէ՛ թէ « եկաց զլուխ եպիսկոպոսաց⁹»,

1. Խորեն. Գ, 18: — 2. Փաւս. 72: — 3. Դայն. 30,
44, 45, 72: — 4. Ազաթ. 42-43, 639, 641: — 5.

Նոյն. 601. Փաւս. 73: — 6. Փաւս. 74: — 7. Ազաթ.
637: — 8. Օրման. Աւագ. 227: — 9. Փաւս. 268-64.

առանց յիշելու ի Հայս կամ ի Կեսարիա ձեռնաղբութիւնը, և տալով անոնց այս գրսիս կամ զիհաւոր եպիսկոպոսաց, կամ ատաց եպիսկոպոսաց՝ տիտղոսը, որ փոխանակեր էր նախկին կարողիկոսին, Յուսէկան ընդունած պատօնին պատճառաւ կը հետեւի՝ որ ասոր այդ երեք յաջորդներն ալ պատճեցին իւր խոնարհած և իրաւագործկ վիճակն ու տիտղոսը, չգնալով ի Կեսար ըիս և չկարենալով եպիսկոպոսական ձեռն նաղբութիւն տալ, ինչ որ կը հաստատէ հայ կաթողիկոսաց յունակեցո գաւազան նազիր մ'ալ, յառաջ բերուած Հ. Գելցերէ²: Եթէ Փաւատոս անոնց ձեռնաղբութիւնը չի պատճեր ըստ իւր սովորութեան, կը հետեւի՝ որ երեքն ալ Յուսէկան պէտ կանիսաւ ձեռնաղբուած էին, ու ձերացած մարդիկ, որով և շուտ յուս վախճանեցան:

Այս չորս հայրապեսք ուրեմն անջատա
ապրեցան կեսարիայէն, մինչդեռ հայ եկեղեցին,
Ներկայացուած իւր եպիսկոպոսաց
դասէն, պահեց իւր միութիւնը նոյն աթոռ
ոյն հետ Վասն զի Փաւստոս իւր պատա
մութիւնը մինչև Ասպուրակ հայոցնելովի
կացութեան փոփոխութիւն չի նշանակերք
Այս երկդիմի վիճակին, այս կէս հերբ
ծուածին նպաստեցին վերահաջաղաքար
կան հանգամանցներն ալ Պապայ որդույն
Արքակայ օրով՝ Պարսից ու կայսեր մէջ
կնցուած դաշամր մը՝ Հայոց գահը երկ-
փեղկեցաւ, Արքակ անցնելով յաւնական
քածնին մէջ՝ Եկեղեց գաւառը, և Խոսք
ըով Թագաւորելով Այրաքատի մէջ՝ որով
մեծ Հայք քաղաքականապէս անջատուած
Ծոյներէն, կեսարիոյ հետ եկեղեցական
կապն ևս տակաւ սկսաւ թուրանալ ու
խցուի իսպառ:

19. Ապառլակի յաջորդեց ս. Սահակ, յիշտառակուած խորենացիէն այսպէս. «Ի տեղի նորա յաջորդէ խոսրով զՍահակ որդի մնձին ներսեսի»։ Հ. Սարգսինեան այս հայրապետու ի կեսարիա ձեռնաւորուած համարեցաւ, հաստատուելով Մես-

բրո երիցու վկայութեան վրայ՝ թէ «առանուին ձեռնազրութիւն Հայր ի կեսարիա՝ մինչև ի ժողովն Քաղաքեղոնի⁵»։ Իսկ ես ճիշդ հայուակը կը խորհիմ, առ ոչինչ զգելով ժ դարու վկայութիւնդ. նոյնպէս յոյն անանուն պատմութեան մ'ըսածը՝ թէս. Սահակայ անկմամբ վերջացաւ կեսարական ձեռնադրութիւնը⁶։ Եւ մտածութիւնս այսպէս կը հաստատեմ, Շապուհ պարսիկ արքայի Հայաստանէն մեկնելէն յետոյ ծանր խոռվութիւն և անիշխանութիւն ծագեցաւ մեր աշխարհի մէջ, ու ստիգեց զԱնակ յունական կողմն անցնիլ, ուր «ոչ ըստ արժանեաց իւրոց եղեւ ընկալեալ»։ և հարկադրեցաւ զՄեսրոր և իւր Թոռնը Վարդան պատուիրակ յցել նամակներով առ Թէոդոս Կայսրն ու կոստանդնուպոլսի պատրիարքը, զբելով առաջնյն՝ թէ «ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս՝ ի հրամանէ վերակացուացս սոցա. այնչափ ատեցեալ զմեզ, մինչև զնշանազիրս անգամ ոչ ընկալան»։ Շատ յայտնի է այդ հակառակութենէն՝ որ Հայոց ու Գամբաց աթոռներու խզումը դեռ կը շարունակէր այդ ժամանակ։ Զայս որոշակի կը հաստատէ Ալտիկոսի պատասխանն ալ առ ս. Ասակ, որ կ'ըսէ. «Այլ ազատ ի մեղադրանաց ոչ թողումը՝ որ ոչ կանիւաւ յիշատակեցեր զիրելութիւն Գրիգորի և Ներսէսի երանելեաց քոյց հարց», և այլն⁷, Բացարութեան պէտք չկայ. Կ'ըսէ՝ թէ մինչև այդ ժամանակ հեռի ապրեր էր նա իւր հարց ընդ կեսարիոյ մտերմութենէն, ուստի և ձեռնազրութիւնն. Այս պարագայն չի ներեք՝ որ նոյն իսկ պարզ եպիսկոպոսութեան համար կապաղովկիոյ ստանը զնացած համարինց զինքը. Այլ ամենայն հաւանականութեամբ՝ այդ ձեռնադրութիւնն ընդունեցաւ կաթողիկոսութեան առթիւ ու հայ եպիսկոպոսներէն, լինելով այսպէս առաջին ներքին ձեռնադրեաւ, հայուահետո».

— 1. Առյ. 226, 264, 270. — 2. Գելգ. Փ. Բ. 126.
— 3. Փառ. 261-62. Խոսկ. Թ. Խոս. — 4. Խոսկ.

9, $\mu\beta$, — 5. $\text{U}_n\text{f}_{\mu\beta}$, 9, 31, — 6. $\text{q}_{\mu\beta}\text{q}$. Φ . β . 52, — 7. $\text{h}_{\mu\beta}^{-1}$, 9, 56.

20. Սահակայ վարման մէջ սակայն մեծ տարրերութիւն մը կը տեսնենք նախորդներէն, թէպէտ անոնց ոճով յաթող կը բազմի խոսրովու ձեռքով, բայց կը զգայ՝ թէ անոնց պէս օտար մը չէ, այլ հարազատ ժառանգ իշխանութեան իւր սուրբ և մեծ հարց: Անոր համար համարձակութիւն կ'առնու՝ իւր աշըն Եփրատէն յայն կոյս առ դարձնելու, ուր կը բնակէր «կէս ազգին Հայոց՝ որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց», կամ «ի գաւառա կէս ազգին Հայոց՝ յիշխանութեանն կայսեր¹», ուր չէր հասած իւր նախնաց ցուազը: և զանոնց ևս իւր վիճակը կը կոչչէր իրրե մասն իւր հովուած հայախօս ազգին: և զոր սխալ հասկացաւ խորենացին, կմիջենալ հայ գաւառներ՝ «որք ընդ ձեռնադրութեանն տուգաննեցան, վիճակեալ յաթոռն կեսարու²». նոր բաժնուած գաւառներ չէին աղոնք:

Ազնուական արենան հետ ստացած յունական կրթութիւնն ու նրբամտութիւնն, խորհցաւ՝ որ փոխանակ կեսարիյ աթոռին հետ հին կապը վերանորոգելու, աւելի օգտակար պիտի լինէր մօտենալ ուղղակի կայսեր ու կ.պոլսի հօգոր պատրիարքութեան, որոյ ազգեցութիւնը կեսարականէն աւելի գօրացած էր հիմայ յունահայ բաժնին մէջ: Նպատակին հասաւ, Աստրեկոս իշխանութիւն տուաւ «վարզապետել զկողմն մեր» նորազիւտ տառերով ու հայերէն լեզուով: և կայսրը՝ հրամայեցէ, կ'ըսէ, որ «զրեց պատուով ընկացին»՝ որպէս զարդարե վարդապէտ իւրեանց, հաեցոյն արքեպիսկոպոսին կեսարու, և զարմանք և ծախը յարցունուաւ եղիցին³: և ուր անգամ մ'ալ կը շեշտուի՝ թէ Սահակ երբեք հաղորդակցած չէր Գամբաց աթոռին հետ, և թէ իւր նոր ուսուցանելի կողմը կեսարականն իսկ էր: թաց աստի՛ կը տեսնենք որ նոյն հայրապետը յետոյ մեծ Հայոց եպիսկոպոսներ ալ կը ձեռնաշպէ⁴ նորոգեալ իշխանութեամբ, ուսկից

գուրկ էին չորս նախորդները: և զոր ծանօթ յունարէն գաւազանագիրն ալ կը հաստատէ, ըսկելով՝ թէ «սուրբ Սահակ իշխանութիւն ստացած Հայաստանի մէջ ծափակուոնից ձեռնադրելու⁵», այս ստացումն իմանալով անշուշտ կոստանդնուպոլիսէն: Այս պարմէ զիտել՝ որ երբ վկամ հրամարեցուց զՍահակ և անոր աթոռը Շմեւելի տուաւ, Սահակայ թողուց կաթողիկոսութեան հոգենոր մասն ու ձեռնադրելու պաշտօնը⁶, գուցէ անոր համար, որ նա պատրիարքէն ստացած էր զայն, և ինք չէր կարող իւրացնել:

21. Այդ համամայնութեամբ՝ կոստանդնուպոլիսի պատրիարքն այն զիրը կը զրաէ Հայոց հանդէպ՝ ինչ որ յառաջապյն ունէր կեսարիա: Ահա փաստելու, Աստիկոս լսեր էր՝ որ յունական Հայաստանի մէջ Բորբորիտոն կոչուած ազանգաւոր բոյն դրած էին: և ծանօթ թղթով կը յանձնարաբէ և Սահակայ՝ սովորել զանոնց «կամ հաւանել (ծշմարտութեան) և կամ հալածել ի ցումէ վիճակէդ՝»: Աստիկոսի յաջորդը Պրոկոպ՝ Հայերը զգուշացնելու համար զանազան հերձուածողաց ցանած որոմներէն, թուղթ մ'ալ ինք կը զրէ՝ ոչ կաթողիկոսին, այլ ուղղակի «աստուածասիրաց և առաքինեաց՝ կպիսիր պոստ և երիցանց և վաճանաց՝ որ ընդ համօքէն աշխարհն Հայաստանեայց⁷: Այս թղթեր կամ շրջարերականներ՝ նոյն պատրիարքաց իրաւասութեան պատկանող վիճակի մը գրուած լինելու հանգամանքը ցոյց կու տան, ինչ որ զգալի է նաև երկուաւեր գործածուած լեզուներէն: Աստիկոս կը զրէ՝ «եղրօր սիրելուոյ և աթուակցի՝ Սահակայ եպիսկոպոսի Հայոց»: և սա կանուանէ զայն՝ «վարդապետ մեր Աստիկոս եպիսկոպոս աշխարհամուտ զրանդ՝»: Եւ ինքն ու Մեսորոր անոր յաջորդին այսպէս կը սկսին: «Առ ճշմարիս և աստուածասէր և պատուական տէր մեր և հայր՝ սուրբ եպիսկոպոս Պրոկոպ»:

1. Կորին, 16, 17. — 2. Խորեն. Գ, ծու. — 3. Ան. — 4. Դոյն. Գ, կու. — 5. Գելզ. Փ. թ. 127.

6. Խորեն. Գ, կու. — 7. Դոյն. Գ, ծու. — 8. Զամէ. Ան. 527. — 9. Խորեն. Գ, ծու.

անոր խօսքերը կը կոչեն՝ «եղանելի պատ-
զամ» ի ձեզ առ մեզ » . և կ'աղօթէինք,
կ'ըսեն, «արժանի լինել յամենայնի ընդու-
նել և վայելել յօրհնութիւնս հոգեւորս ձե-
րոյ մեծասցանչ սրբութեանդ... պահել
զհաստատութիւն հաւատոյ՝ զոր ի սկզբա-
նէ ի ձեր ճշմարիտ վարդապետութիւնէդ
ընկալեալ ունէաց¹», «ձեզ որ ի մեծամեծ
իշխանութիւնդ վայելէք... տեր մեր և ճշ-
մարիտ աստուածասէր հայր և ամենայն
եկեղեցւոյ Աստուծոյ ընդունելի » . և կը
յարեն՝ թէ «զմեր տկարութիւնս զօրա-
ցուցանել մի՛ դանդաղեցին» . և եթէ ինչ
ըստ չափ թղթոյդ առ սպիտութեան վրի-
պեալ իցե, ուղղել անգարը լինիջիր²։
Հայոց այս խոնարհական բարբառն իրենց
մասին, և բարձր մեծարանը պատրիար-
քին նկատմանը հաւատոր մ՛առ հաւասա-
րը խօսողի մը չէ բնաւը. այլ ուղղուած
անոր իսկ՝ որոյ հրամանան և որոյ իշխա-
նութեան ներքը կը հովուէ Ամակ
յունական Հայաստանը. Որով ձրի է Ն.
Վ. Մելիք-Թանգենի կարծիքը՝ թէ «տա-
ռերի գիւտը անկախ զարգեց Հայոց
եկեղեցին³», և Հ. Գեղեցիր տեսութիւնը
բուրութիւն «անկախ հայրապետ» մը հա-
մարելու զԱշհակ⁴, կ'երկի՝ ոչ մին և ոչ
միսաը նկատելով մեր մատնանշած կա-
րենոր պարագաները։

(Եարայարելի)

Հ. Վ. Հաթուռ

1. Գր. բդրոց, 9. — 2. Անտ. 12-13. — 3. Հայ.
եկեղ. իրաւ. Բ. 100. — 4. Գւլւ. Փ. Բ. 143.



ՀԱՅ ԹԺԾԿԱԿԱՆ ԶԵՐԱԳԻՐՔ

Ա. ԴԱԶԱՐԴՈՒ ՎԱՆՉԻՆ

(Եար. տես Բազմ. 1926, էջ 184)

Կ.

ԲԺՇԿԱՐԱՆ ՑՈՎԱԿԻՄ ՕՂՈԽԱԼՈՒԽԵԱՆ

Ցովակիմ Բժիշկ Օղուլլուխեան ծանօթ
է արդէն, իւր «Նիկոթ ԲժՇԿԱԿԱՆ» աշ-
խարհարար ընտիր աշխատութեամբը, որ
1806ին հրատարակուած է Վենետիկի
վանքէն։

Ներկայս՝ անոր մէկ ուրիշ գործն է ձե-
ռազիր, անտիպ, որ կը կրէ հետևեալ
վերնազիրը։

Բժշկութիւն
Յօրինեալի Պարոն Ցովակիմէ
Օղուլլուխեան

Գեղեցիկ կազմով, 24 հր. մեղր մհ-
ծոթեամբ, 18 հր. մեղր լայնութեամբ,
և 2 հր. մեղր թանձրութեամբ հատոր
մ'է. թուղթը պարզ սովորական, զիրը
որոր, որ բոն Օղուլլուխեանի ձեռագրու-
թիւնն է և կը կրէ 1148 թուահամար։

* *

Ցովակիմ Օղուլլուխեան, որուն կեն-
սագրութիւնը գրած եմ ժամանակին¹, նախ-
անցեալ զարու նշանաւոր թժիշկներէն էր:
Ենած էր ի. Պոլիս զէպի 1746 թուին,
և հոն վախճանած 1815-1818. իւր
թժշկութիւնը ուսած էր Վիեննայի Հա-
մալսարանը և հոնկէ ալ վկայուած։

Բժշկական արուեստը մեծ հեղինակու-
թեամբ կիրարկելէ զատ, նաև մեծ հուանդ
ունեցած է պատրաստել իւր Ազգին հա-
մար ժողովրդական Բժշկարաններ, որոնց
առաջինն էր՝ Նիկոթ ԲժՇԿԱԿԱՆը։

1. «Հաւեր Ասսօրեա» 1896 էլ 106-113.